

լասարին միտնգամայն Գրիգոր վրդ. ին յիշատակն է. ինչպէս կը վկայեն ձեռագիր յիշատակարաններն, որք են «...մհտ. Կուլաւսարին որ շատ աշխատեցաւ ի դուռն Ս. Յակոբայ, ի պաղճեմն եւ յայլ ամենայն տեղիք, եւ ջերմեռանդ սիրով ցանկացաւ այս գրոցս եւ կցորդ ու մասնակից եղև տէր Գրիգոր վրդ. ին եւ ստացան երկոքեանն ի մխտին զայս ժամագիրքս եւ եղին յիշատակ հոգևոց իւրեանց ի Քրիստոսի սր. ծննդեան տեղիքն... յիշեցէք... Կուլասարին եւ հօրն Գրիգորին մօրն... եւ եղբուրն Մինասին եւ կողակցւոյն Աւրիքանին եւ Աննային եւ որդւոցն Պաւլոսին եւ Տաւնոյին եւ հարսին Մըրուսիին...»: «...Ա.ժ. ողորմի սացէք ստացօղի սորա... սոսկ անուռն Գրիգորի որ եմ ի բուն զաւառէն Սասնոյ, ի գեղջէն. նիչ կոչեցեալ, որ կացի սակաւ ժամանակ յերուսողէմ եւ ստացայ զժամագիրքս, ոչ ի վաստակոց եւ յաշխատանաց իմոց, այլ յողորմութենէ ողորմածաց, յիշատակ հոգևոյ իմոյ եւ ծնողաց իմոց, հօրս տէր Ստեփաննոսին եւ մաւրս Շողոյին եւ կենակցին իմոյ Մանուշակին...»: ... Այլ եւ եղի զնա յիշատակ ի Գ. սր. տեղիքն...: Արդ ի թվին ՌՁԵ (= 1636) ստացաք զգիրքս զայս...»: (Խապ. Յուց. տեաք. ԻԲ. էջ 2100-2101):

Գրիգոր վրդ. հաւանաբար երէց էր 1630ին, ան նուիրած է Ս. Յակոբ վանքին նաև իր ընդօրինակած մէկ ֆարոգգիտին (ՄՁ. Թ. 486). իր մասին տեսնել նաև նոյնին յիշատակարանը:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՎԱՆՑԻ.—Մը. Աշկ. Կիրակոս արքեպիսկոպոսին եւ կը յաջորդէ անոր՝ Եգիպտոսի մէջ 36 տարի կը պաշտօնավարէ եւ հոն կը վախճանի 1862 ին եւ կը թաղուի Գահիրէի Ս. Մինաս մատրան դրան առջև եկեղեցականաց թաղին մէջ. իր ստպանաքարը հետեւեալն ունի.

«Դամբան վանեցի ծայրագոյն Գրիգոր վարդապետի որ ձեռնադրեալ կրօնաւոր Կիրակոսէ սրբազան արքեպիսկոպոսէ եւ վարեալ զսորին պաշտօնն անթերի ի կենցաղոյս յեթանասուն եւ հինգ ամաց հասակի: Յամի տեառն 1862 ի Յունվարի 6:»

Գրիգոր վրդ. Գահիրէի առաջնորդարանի կից իր սեփական մեծ տունը նուիրած է եկեղեցիին, եւ անոր վերնայարկին մէջ հաստատուած է առաջնորդարանի դիւանատունը 1910էն սկսեալ (Նօթեր. էջ 87):

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՏԱԹԵՒԱՅԻ.—Ծ. 1346ին. աշկ. Յովհաննէս